

Կ Ա Ր Գ

«ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ» ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ 44 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ

1. Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Դ Ր Ո Ւ Յ Թ Ն Ե Ր

1. Սույն կարգը սահմանում է «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մատչելի բնակարան երիտասարդ մասնագետներին» բնակարանային ապահովության սոցիալական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում Երևան քաղաքի Մոնթե Մելքոնյան 44 հասցեում կառուցվելիք բազմաբնակարան շենքերի բնակարանների շահառուների միջև բնակարանների բաշխման (այսուհետ՝ բնակարանների բաշխում) սկզբունքներն ու ընթացակարգը:
2. Բնակարանների բաշխումն իրականացվում է հետևյալ սկզբունքների պահպանմամբ՝
 - հրապարակայնություն և թափանցիկություն,
 - առաջնային արձագանքում ծրագրի հիմնական շահառուների կարիքներին,
 - բաշխման ընթացքում հավասարության սկզբունքի ապահովում,
 - բաշխման ընթացքում սուբյեկտիվ մոտեցումների բացառում,
 - շահառուների մասնակցություն բնակարանների բաշխման գործընթացին:
3. Շահառուների միջև բնակարանների բաշխումն իրականացվում է հրապարակային վիճակահանության միջոցով:

2. Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Յ Ի Ն Վ Ի Ճ Ա Կ Ա Հ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

4. Հրապարակային վիճակահանությամբ որոշվում է յուրաքանչյուր շահառուի բնակարանը (վիճակատոմսերում բնակարանների նկարագրությունը ներառում է բնակարանի մակերեսը, սենյակների թիվը, հարկը, մասնաշենքը և բնակարանի պայմանական համարը):
5. Ըստ բնակարանների սենյակների քանակի և մակերեսային նախընտրությունների շահառուները բաժանվում են համապատասխան խմբերի: Վիճակահանությունն իրականացվում է յուրաքանչյուր խմբում ներառված շահառուների միջև:
6. Առաջարկվող որևէ տեսակի բնակարանների քանակը շահառուների պահանջարկին չբավարարելու դեպքում շահառուին հնարավորություն է տրվում մասնակցելու այլ մակերեսով բնակարանների (թափուր տեղերի առկայության դեպքում) լրացուցիչ վիճակահանությանը:
7. Հրապարակային վիճակահանությանը շահառուն մասնակցում է անձամբ (անձը հաստատող փաստաթղթով), կամ ներկայացուցչի միջոցով (գրավոր լիազորագրի առկայության դեպքում):

3. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

8. Հրապարակային վիճակահանության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) կազմակերպում վիճակահանությունը, ապահովում սույն կարգի պահանջների կատարումը, արձանագրում է վիճակահանության արդյունքները, երաշխավորում վիճակահանության հրապարակայնությունը և օբյեկտիվությունը:

9. Հանձնաժողովը ձևավորվում է վիճակահանության անցկացման օրը:

10. Հանձնաժողովը բաղկացած է 5 անդամներից: Հանձնաժողովի նախագահը (մշտական հիմունքներով)՝ Ծրագրի իրավախորհրդատուն է: Հանձնաժողովի երկու անդամները ԵՊՀ շրջանավարտների միավորման ներկայացուցիչներն են իսկ մնացած 2 անդամներն ընտրվում են վիճակահանության անցկացման օրը՝ շահառուների կողմից, իրենց կազմից:

Վիճակահանության ընթացքն արձանագրվում է և կազմված արձանագրությունը ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

11. Հանձնաժողովի լիազորությունները դադարում և այն լուծարվում է վիճակահանության արդյունքներն արձանագրելուց հետո:

4. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

12. Տվյալ խմբի շահառուները վիճակահանությանը մասնակցում են իրենց ազգանունների այբբենական հերթականությամբ:

13. Վիճակահանության կազմակերպման համար նախապատրաստվում են զամբյուղներ, որոնցում առկա վիճակատոմսերից յուրաքանչյուրը պարունակում է տեղեկատվություն բնակարանի մասին:

14. Շահառուն դուրս բերելով վիճակատոմսը, բարձրաձայն ընթերցում է այն, բաց վիճակում ցուցադրում է վիճակահանությանը ներկա մասնակիցներին և հանձնաժողովի անդամներին, ովքեր գրանցում են արդյունքը: Այնուհետև շահառուն տեղում ստորագրում է վիճակահանության անհատական արձանագրությունը (հավելված 1), որը պարունակում է տվյալներ նրա կողմից վիճակահանությամբ ընտրված բնակարանի մասին, ինչպես նաև նշում է վիճակահանության կազմակերպման և անցկացման հետ կապված դիտողությունները և առաջարկությունները, եթե այդպիսիք կան: Անհատական արձանագրությունը հաստատվում է «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության նախագահի կողմից և դրա պատճենը շահառուի պահանջի դեպքում տրամադրվում է նրան:

